

Վելիճեան կոչուած դրամագլխայն ինտիլը կարգադրող օրինագիծ մի առաջարկուեցաւ Գերմանիոյ պետական ժողովոյն, որով Հանութեի Գէորգ Թագաւորին ստացուածոց վրայ ցայժմ՝ ի գօրութեան եղած գրամման վճիռը կը քարծուի: Այս ինտիլոյ մէջ միաբանած են Գերմանիոյ կայսրն եւ Բուսպերլանտի դուքսն: Ամսոյս 13ին մեռաւ Հեսսէի աքրի-դուքսը Լուտովիկոս Դ, որ ծնած էր 1837ին, եւ 1862ին ամուսնացած Վիկտորիա Թագուհոյն երկրորդ դստեր հետ. 1866 եւ 1870 տարեաց պատերազմաց մասնակից եղած, եւ 1877ին Հեսսէի գահն ելած: Իւր Տօրն յաջորդեց Էռնեստ Լուտովիկոս աւագադուքսն, որ ծնած է 1868ին:

Անգղիոյ եւ Միացեալ Նահանգացմէջ քառական ժամանակէ ի վեր առկախ ինտիլը մի կայ Պէրինկի ծովուն մէջ փոկ որսալու իրաւանց նկատմամբ: Այս ինտիլոյն մէջ կերպ մ'առ ժամանակեայ համաձայնութիւն գոյացած էր. եւ կը յուսացուէր որ իրաւունքի մի վճռով վէճը լծայ: Նորեքս աւելի յոռեցած էր այս ինտիլոյն վիճակը: Անգղիա չէր ուզեր նորոգել առ-ժամանակեայ համաձայնութիւնը եւ իւր իրաւունքը մինչեւ անգամ՝ նաւատորմիով միկ ուզէր պաշտպանել. ընդհակառակն կը պահանջէր Միացեալ Նահանգը որ նորոգուի սոյն համաձայնութիւնը մինչեւ իրաւունքի մի վճռելը, եւ կը սպառնան տորմիով քարգիլել Անգղիացոց փոկ որսալ:

Վերջէն ժամանակներս եւրոպական արշաւանքներն յԱֆրիկէ մեծ դժբախտութեանց կ'անդիպին: Անգղիացիք մեծ կորուստ ունեցան ի Վիլիու. եւ Նիասսա երկրին մէջ ալ Ճոնսթըն անգղիական հիւպատին դիրքը վտանգաւոր է: Բորդուկալական Բիլիմանէ քաղաքին վրայ կը սպառնան յարձակիլ 6000 սեւամորթք: Բրիտանացոց Սամաութն թագաւորութեան թիմալու մայրաքաղաքին վրայ ըրած արշաւանքը վատաբախտ ելք ունեցաւ, շատ յառաջ ալ գաղղիական արշաւանքմ՝ որուն պետն էր Քրամբէլ եւ որ դէպի Չատ լիճ կը դիմէր, քայքայուեցաւ. նոյնպիսի ելք ունեցան գերմանական արշաւանքն ի Կամբուլն եւ Արեւմտեան Աֆրիկէ:

Մեծ վէճ ծագած է նաեւ Շուէտի եւ Նորուեգիոյ մէջ: Այս երկու պետութիւնք՝ որ ըստ ինքեան անկախ են իրարմէ՝ միացած են մէկ արքայի իշխանութեան տակ՝ որ է Շուէտի Թագաւորը: Նորուեգիա որ յառաջ Դանիոյ հետ միացած էր, այժմու վիճակն ստացաւ այս դարու սկզբն: Թէպէտ եղան միշտ փորձեր՝ ծուլելու երկու քոյր պետութիւնք, քայց անյաջող եղան, եւ մնացին նոյն վիճակին մէջ: Այժմ՝ Նորուեգիա կը սկսի պահանջել Շուէտէն որ նաեւ այն իրերուն մէջ՝ որ միութիւն կար, անջատուի՝ ըլլայ ըստ իրաւանց, այնպէս որ արդեամբք երկու ըլլորովին անկախ պետութիւն ըլլան մէկ թագաւորի ներքեւ դաշնակցած, եւ այսպէս ի մասնաւորի Նորուեգեան ուրոյն հիւպատոսութիւնք կը պահանջէ հաստատել եւն: Կը վախցուի որ ինտիլը կրնայ սնծնալ. վասն զի վերջին ընտրութեանց մէջ Նորուեգեան կողմնակցութիւնը շատ զօրացաւ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌՍՏՈՒՄԵՆԿԱՆ

ՄԱՏՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Պոլոկի Դիաղոխոսի շաղկապ ատուածաբանականը 95:

ՀԵՆՌԵՕՍՏԻԱՆ — Շտրուսկացիք եւ իրենց նորագիւտ յիշատակագիրն. 101:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ — Լեոնքի վերայ բեւեռած հսկանքի մասին Կովկասեան Առասպելները. 102 — Հայագի երեսփոխանք ի Հունգարիա. 108 (Պատկերաւ):

ԳՐԱԿԱՆ — Հայկական ծնուագիւց ժեմարանի Արեւելեան լեզուաց ի Պետերբուրգ. 111:

ՄԱՏՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Նոյնի Պատմութիւնը Վարդանի եւ Հայոց պատերազմի համար. 117:

ՐԱՆԱՏՏԵՆԴՐԱԿԱՆ — Ուղեյն Հրաժեշտի. 120:

ԵՐՈՒՅԵՑԻՅԱՆԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒՅԵՑԱԿԱՆ — Շրջագայութիւն նկարաց աշխարհին մէջ. 122: — Տպագրութեան գիւտը. 124:

ՍԵՆՏԵՆՏԵ

ՆՈՐԱՆՈՒԹԵ — Նոյնի առողջաբար է. 127:

ՏՆՏԵՆԱԿԱՆ — Նոր տեսակ հացաբարութիւն. 127:

ՄԱՐԱՆՈՒԹԵ — Կոստանդնուպոլսոյ մամուլը. 127:

ՔՐԴՈՒՄԵՆ ԵՄԻՍԻՐԻՒՆ 127:



ՀՐԱՄԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԻՆԱՍՏՈՒ ՆՄԱՐԱԳԻՐ

Հ. ԱՍՓԱՅԷԼ Կ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ. ԻՒՒԹՐՈՐԵՆ 890ԲԱՆ